Տպագրված է
ընդամենը 6 օրինակ
օրինակ......3...........
Գրանցված է
ՀՀ իրավաբանական
անձանց պետական
ռեգիստրում ,
Գրանցման թիվ 78.210.00924
«15» 04...2003թ.
վկայական 03Ա 057792
Պետական ռեգիստրի
....
տարածքային բաժնի պետ
....

Հաստատված է
ՀՀ Գեղարքունիքի մարզպետի
2003 թ-ի ապրիլի
թիվ..........որոշմամբ
ՀՀ Գեղարքունիքի մարզպետ
..............Վ. Հակոբյան
«15»....................... 2003 թ

ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ

« ՀՀ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԱՅԻՆ ՄԱՐԶԱԴՊՐՈՑ » ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ

I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐԸ

1. «ՀՀ Գեղարքունիքի մարզային մարզադպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպությանը (այսուհետ՝ մարզադպրոց) շահույթ ստանալու նպատակ չհետապնդող, իրավաբանական անձի կարգավիճակ ունեցող, ֆիզկուլտուրային-առողջարարական և սպորտային (մարզական) գործունեություն իրականացնող պետական ոչ առևտրային կազմակերպություն է:

2. Մարզադպրոցը ստեղծվել է ՀՀ կառավարության 2002 թվականի օգոստոսի 15-ի «Պետական ոչ առևտրային կազմակերպություններ ստեղծելու մասին» N 1402-Ն և 2003 թվականի մարտի 20-ի «ՀՀ կառավարության մի շարք որոշումներում փոփոխություններ կատարելու մասին» N 276-Ն որոշումների հիման վրա և հանդիսանում է «Գեղարքունիքի մարզային մարզադպրոց» պետական հիմնարկի (գրանցման ծածկագիրը 10029909, վկայական N բ 003002, գրանցման ամսաթիվը՝ 1702 1997թ.) իրավահաջորդը:

3. Մարզադպրոցի հիմնադիրը Հայաստանի Հանրապետությունն է՝ ի դեմս Հայաստանի Հանրապետության կառավարության (այսուհետ՝ հիմնադիր):

✓4. Մարզադպրոցն իր գործունեության ընթացքում ղեկավարվում է Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ և սույն կանոնադրությամբ:

5. Մարզադպրոցի գտնվելու վայրն է՝ ՀՀ Գեղարքունիքի մարզ գ. Սարուխան
ինդեքս՝ 378633

6. Մարզադպրոցը որպես սեփականություն ունի առանձնացված գույք և իր պարտավորությունների համար պատասխանատու է այդ գույքով:

Մարզադպրոցը կարող է իր անունից ձեռք բերել ու իրականացնել գույքային և անձնական ոչ գույքային իրավունքներ, կրել պարտականություններ, դատարանում հանդես գալ որպես հայցվոր կամ պատասխանող: Հիմնադիրը պատասխանատվություն չի կրում մարզադպրոցի պարտավորությունների, իսկ մարզադպրոցը՝ հիմնադրի պարտավորությունների համար:

7. Մարզադպրոցի անվանումն է՝
Լրիվ անվանումը՝ «ՀՀ Գեղարքունիքի մարզային մարզադպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպություն

Կրճատ անվանումը՝ «ՀՀ Գեղարքունիքի մարզային մարզադպրոց» ՊՈԱԿ

✓ 8. Մարզադպրոցն ունի ՀՀ պետական զինանշանի պատկերով և իր՝ հայերեն անվանմամբ կլոր կնիք ինչպես նաև կարող է ունենալ ձևաթղթեր, խորհրդանիշ և անհատականացման այլ միջոցներ:

9. Մարզադպրոցն ունի ինքնուրույն հաշվեկշիռ և բանկային հաշիվ:

10. Մարզադպրոցն այլ կազմակերպության հիմնադիր կամ մասնակից կարող է հանդիսանալ միայն հիմնադրի որոշմամբ:

11. Մարզադպրոցը ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով կարող է համագործակցել Հայաստանի Հանրապետության և օտարերկրյա մարզական, մշակութային, կրթական հաստատությունների և կազմակերպությունների հետ՝ ուսումնա-մարզական գործի տեսական ու գիտագործնական խնդիրների վերաբերյալ համատեղ ծրագրերի մշակման և իրականացման նպատակով:

12. Մարզադպրոցում չեն թույլատրվում քաղաքական և կրոնական կազմակերպությունների ստեղծումն ու գործունեությունը:

II. ՄԱՐԶԱԴՊՐՈՑԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԱՌԱՐԿԱՆ ԵՎ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ

13. Մարզադպրոցի գործունեության հիմնական նպատակը և առարկան ֆիզկուլտուրային - առողջարարական և սպորտային (մարզական) գործունեության իրականացումն է:

14. Մարզադպրոցը կարող է հիմնադրի կողմից սահմանած կարգով զբաղվել ձեռնարկատիրական գործունեությամբ իսկ լիցենզավորման ենթակա գործունեության, տեսակներով՝ միայն լիցենզայի հիման վրա:

15. Մարզադպրոցն իր գործունեության նպատակներին համապատասխան՝

ա) ապահովում է մարզադպրոցների համապատասխան ուսումնական ծրագրերի պահանջների կատարումը,

բ) ապահովում է ընտրած մարզաձևում պարապողների սպորտային ընդունակությունների կատարելագործումը,

գ) ֆիզիկական կուլտուրայի և սպորտի միջոցներով ապահովում է պարապողների առողջության պահպանումը և ամրապնդումը,

դ) ՀՀ ազգային և օլիմպիական հավաքական թիմերի համար նախապատրաստում է բարձրակարգ մարզիկներ,

ե) հանրակրթական դպրոցների հետ հաստատում է սերտ կապ օժանդակելով ֆիզկուլտուրային արտադասարանական աշխատանքների, ֆիզկուլտուրային առողջարարական միջոցառումների կազմակերպմանը:

16. Մարզադպրոցում գործում են սկզբնական պատրաստականության, ուսումնամարզական, սպորտային կատարելագործման և սպորտային բարձրագույն վարպետության խմբեր, որոնք կարող են գործել մարզի տարբեր հանրակրթական դպրոցների մարզաբազաների հիման վրա:

17. Մարզադպրոցի աշխատանքի հիմնական ցուցանիշ է համարվում օլիմպիական հերթափոխի ուսումնարաններ, հանրապետության հավաքական թիմեր ընդգրկված մարզիկների քանակը:

18. Հանրապետության հավաքական թիմերը պարբերաբար համալրելու, աշխարհի, Եվրոպայի, օլիմպիական խաղերի մասնակիցներ տալու դեպքում մանկապատանեկան մարզադպրոցի կարգավիճակ ունեցող մարզադպրոցին կարող է շնորհվել օլիմպիական հերթափոխի մարզադպրոցի կարգավիճակ:

19. Մարզադպրոցն իր գործունեությունն իրականացնում է առնվազն 14 խմբի առկայությամբ, մեկ կամ ավելի մարզաձևերի բաժանմունքներով:

20. Մարզադպրոցը գործում է ամբողջ տարվա ընթացքում դպրոցական արձակուրդների օրերին մեծացնելով աշխատանքի ծավալը: Մարզադպրոցն ուսումնական տարին սկսում է սեպտեմբերի 1-ից՝ ապահովելով 51-52 շաբաթվա համար նախատեսված շուրջտարվա մարզումները, որոնցից 5-6 շաբաթը ամառային և ձմեռային առողջարարական-սպորտային ճամբարային պայմաններում: Մարզադպրոցի համակազմի և ուսումնական խմբերի հրամանագումը կատարվում է ամեն տարի, մինչև հոկտեմբերի 1ը:

21. Մարզադպրոցի ուսումնամարզական գործընթացը կառուցվում է առանձին սպորտաձևերի ուսումնական ծրագրերի պահանջների հիման վրա: Մարզադպրոցի ուսումնամարզական գործընթացի հիմնական ձևերն են խմբակային ու անհատական ուսումնասպորտային ու տեսական պարապմունքները, բժշկա-վերականգնիչ միջոցառումները, մասնակցությունը մրցումներին, ուսումնամարզական հավաքներին, այդ թվում սպորտային-առողջարարական ճամբարներում:

22. Մարզադպրոցը կազմակերպում է ուսումնամարզական հավաքներ՝
ա) Հանրապետական մրցումներին նախապատրաստվելու համար 12 օր,
բ) Միջազգային մրցումներին նախապատրաստվելու համար 24 օր,
գ) Հատուկ ֆիզիկական պատրաստականության համար 21օր,

III. ՄԱՐԶԱԴՊՐՈՑԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆԸ, ՆՐԱ ԱՄՐԱՑՎԱԾ ԳՈՒՅՔԸ ԵՎ ՖԻՆԱՆՍԱՏՆՏԵՍԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ

23. Մարզադպրոցի սեփականությունը ձևավորվում է մարզադպրոցի հիմնադրման ժամանակ և հետագայում հիմնադիր կողմից սեփականության իրավունքով նրան հանձնվող, ինչպես նաև մարզադպրոցի գործունեության ընթացքում ձեռք բերված գույքից: Մարզադպրոցի գույքի ձևավորման աղբյուր կարող են հանդիսանալ նաև ՀՀ և օտարերկրյա պետությունների իրավաբանական և ֆիզիկական անձանց կատարած ներդրումները, այդ թվում արեգործական, հովանավորչական, նպատակային նվիրատվություններն ու հատկացումները:

24. Մարզադպրոցը իրավունք ունի օրենքին, հիմնադրի որոշումներին և (կամ) սույն կանոնադրությանը համապատասխան՝ իր հայեցողությամբ տիրապետել, տնօրինել և օգտագործել սեփականության իրավունքով իրեն պատկանող գույքը:

25 Մարզադպրոցի սեփականության իրավունքով պատկանող գույքի նկատմամբ հիմնադիրը չունի իրավունքներ, բացառությամբ մարզադպրոցի լուծարումից հետո մնացած գույքի:

26. Մարզադպրոցի սեփականության պահպանման հոգսը կրում է մարզադպրոցը:

27. Մարզադպրոցի սեփականության վրա կարող է բռնագանձում տարածվել միայն դատական կարգով:

28. Հիմնադրի որոշմամբ մարզադպրոցը անժամկետ ու անհատույց օգտագործման իրավունքով ամրացվում է ցանկացած գույք:

29. Հիմնադիրն իրավունք ունի հետ վերցնել իր կողմից մարզադպրոցին ամրացված գույքը:

30. Մարզադպրոցը իրավունք չունի ամրացած գույքը կամ դրա նկատմամբ իր իրավունքները օտարել, գրավ դնել, հանձնել անհատույց օգտագործման: Մարզադպրոցը իրավունք ունի իրեն ամրացված գույքը պետության անունից հանձնել վարձակալության, եթե դա արգելված չէ հիմնադրի որոշմամբ: Ամրացված գույքի վարձակալության ժամկետը մեկ տարուց ավելի չի կարող սահմանվել, բացառությամբ հիմնադրի կողմից սահմանված դեպքերի: Ամրացված գույքի օգտագործման արդյունքում մարզադպրոցի ստացած եկամուտը մարզադպրոցի սեփականությունն է: Մարզադպրոցին ամրացված գույքի օգտագործման ընթացքում առաջացած անբաժանելի բարելավումները հիմնադրի սեփականությունն է:

31. Հիմնադրի կողմից մարզադպրոցին ամրացված անշարժ գույքի կամ պետական պարտադիր գրանցման ենթակա գույքի նկատմամբ մարզադպրոցի օգտագործման իրավունքը հանդիսանում է դրանց նկատմամբ իրավունքի պետական գրանցման պահից:

32. Մարզադպրոցը իրավունք չունի օտարել, գրավ դնել, վարձակալության հանձնել մարզադպրոցի գույքը:

33. Մարզադպրոցի գործունեության ընթացքում առաջացած շահույթն օգտագործվում է սույն կանոնադրությամբ նախատեսված նպատակների իրականացման համար: Մարզադպրոցի շահույթի օգտագործման կարգը սահմանում է հիմնադիրը:

34. Մարզադպրոցի կողմից իր կարիքների համար գնումները կատարվում են «Գնումների մասին» ՀՀ օրենքով սահմանված կարգով: Պետական բյուջեով մարզադպրոցի համար ուղղակիորեն նախատեսված միջոցների սահմաններում մարզադպրոցի կողմից պետությանը մատուցվող ծառայությունների, աշխատանքների և ապրանքների գնումն իրականացվում է մեկ աղբյուրից գնումների կատարման ձևով: Մարզադպրոցի կողմից պետությանն այլ ծառայություններ, աշխատանքներ կարող են մատուցվել կամ ապրանքներ իրացվել միայն «Գնումների մասին» ՀՀ օրենքով նախատեսված կարգով:

35. Մարզադպրոցի հարկերը, տուրքերը և պարտադիր այլ վճարումները կատարվում է շահույթ ստանալու նպատակ չհետապնդող կազմակերպությունների համար նախատեսված կարգով և չափով:

36. Մարզադպրոցը ֆինանսավորվում է Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

37. Մարզադպրոցի ֆինանսատնտեսական գործունեության և ֆինանսական հաշվետվությունների արժանահավատությունը ենթակա է վերաստուգման (աուդիտի) լիազորված պետական մարմնի կողմից ընտրված անկախ աուդիտորական կազմակերպության կամ ՀՀ Ֆինանսների և Էկոնոմիկայի նախարարության ֆինանսական վերահսկողության ստորաբաժանման կողմից:

IV. ՄԱՐԶԱԴՊՐՈՑԻ ԿԱՌԱՎԱՐՈՒՄԸ

38. Մարզադպրոցի կառավարումը իրականացնում են հիմնադրի կողմից լիազորված պետական մարմինը՝ ՀՀ Գեղարքունիքի մարզպետը (այսուհետ՝ մարզպետ), գործադիր մարմինը՝ տնօրենը, որը պաշտոնի նշանակվում է և պաշտոնից ազատվում է օրենքով սահմանված կարգով:

39. Մարզադպրոցի հիմնական գործունեության հարցերի քննարկման, մասնագիտական և կազմակերպական աշխատանքների արդյունավետ իրականացման նպատակով տնօրենին առընթեր ստեղծվում են խորհրդակցական մարմիններ՝

մանկավարժական- մարզչական խորհուրդ

ծնողական խորհուրդ

Մարզադպրոցի խորհրդակցական մարմինների կազմում կարող են ընդգրկվել մարզադպրոցի մասնագետներ, այլ կազմակերպությունների ներկայացուցիչներ:

Մարզադպրոցի խորհրդակցական մարմինների կազմը, և կանոնակարգերը հաստատում է մարզադպրոցի տնօրենը՝ համաձայնեցնելով լիազորված պետական մարմնի հետ:

Մարզադպրոցի խորհրդակցական մարմնի որոշումներն իրականացվում են մարզադպրոցի տնօրենի հրամաններով:

40. Մարզադպրոցի հիմնադիրը ունի մարզադպրոցի գործունեության և կառավարմանը վերաբերվող ցանկացած հարցը վերջնական լուծելու իրավունք, բացառությամբ օրենքով նախատեսված դեպքերի:

41. Մարզադպրոցի հիմնադրի բացառիկ լիազորություններն են.

ա) Մարզադպրոցի հիմնադրումը,
բ) Մարզադպրոցի գործունեության առարկայի և նպատակների, այդ թվում՝ նրա կողմից իրականացվող ձեռնարկատիրական գործունեության տեսակների սահմանումը,
գ) Մարզադպրոցին սեփականության իրավունքով հանձնվող և /կամ/ ամրացվող՝ պետությանը պատկանող գույքի կազմի հաստատումը,
դ) Մարզադպրոցի կանոնադրության հաստատումը և դրանում փոփոխություններ կատարելը
ե) Մարզադպրոցի կառավարման համակարգի սահմանումը,
զ) Մարզադպրոցի վերակազմակերպումը և լուծարումը,
է) Մարզադպրոցի լուծարման հանձնաժողովի նշանակումը և լուծարման հաշվեկշռի հաստատումը,
ը) Օրենքով և սույն կանոնադրությամբ նախատեսված այլ հարցերի լուծումը:

42. Մարզադպրոցի ընդհանուր կառավարումն իրականացնում է մարզպետը, որին ՀՀ կառավարության 2002թ. օգոստոսի 15-ի N 1402 –Ն որոշման 7-րդ կետով վերապահված են նաև «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» ՀՀ օրենքի 13-րդ հոդվածի 2-րդ մասի «գ», «դ», «ե» և «է» կետերով /նույնը սույն կանոնադրության 41-րդ կետի «գ», «դ», «ե», «զ» ենթակետերը/ նախատեսված լիազորությունները:

43. Մարզպետը՝
ա) Ապահովում է մարզադպրոցի բնականոն գործունեությունը և պատասխանատվություն է կրում դրա չկատարման կամ ոչ պատշաճ իրականացման համար:
բ) Սույն կանոնադրությամբ սահմանված կարգով պաշտոնի է նշանակում և պաշտոնից ազատում է մարզադպրոցի տնօրենին:
գ) Հաստատում է մարզադպրոցի տարեկան ծախսերի նախահաշիվը,
դ) Իրականացնում է մարզադպրոցի գործունեության վերահսկողությունը,
ե) Կասեցնում կամ ուժը կորցրած է ճանաչում մարզադպրոցի տնօրենի ՀՀ օրենսդրության պահանջներին հակասող հրամանները, հրահանգները, կարգադրություններն ու ցուցումները,
զ) Լսում է մարզադպրոցի գործունեության մասին հաշվետվություններ, քննում դրա գործունեության վերստուգման արդյունքները,
է) Հաստատում է մարզադպրոցի՝ սեփականության իրավունքով հանձնվող և /կամ/ ամրացվող պետությանը պատկանող գույքի կազմը,
ը) Վերահսկողություն է իրականացնում մարզադպրոցին ամրացված պետական սեփականության օգտագործման և պահպանության նկատմամբ:
թ) Վերահսկողություն է իրականացնում կազմակերպության սեփականության պահպանության նկատմամբ, իսկ օրենքով, հիմնադրի որոշմամբ կամ սույն կանոնադրությամբ՝ համաձայնություն է տալիս գույքի օտարման կամ վարձակալության հանձնման համար:
ժ) Հաստատում է մարզադպրոցի տարեկան հաշվետվություններն ու տարեկան հաշվեկշիռը:
ի) Իրականացնում է «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» ՀՀ օրենքով, հիմնադրի որոշումներով և սույն կանոնադրությամբ նախատեսված այլ գործառույթներ:

44.Մարզադպրոցի ընթացիկ գործունեության ղեկավարումն իրականացնում է տնօրենը, որին նշանակում է պաշտոնի և պաշտոնից ազատում է մարզպետը:

Մարզադպրոցի տնօրենի հետ մարզպետը կնքում է պայմանագիր: Պայմանագրով սահմանվում են մարզադպրոցի տնօրենի իրավունքները, պարտականությունները, պատասխանատվությունը և փոխհարաբերությունները լիազորված պետական մարմնի հետ, նրա աշխատանքի վարձատրման պայմանները, պայմնագրի դադարեցման՝ «Պետական ոչ

առևտրային կազմակերպության մասին» ՀՀ օրենքով նախատեսված բոլոր հիմքերը և այլ դրույթները, որոնք պայմանավորող կողմերը անհրաժեշտ կգտնեն; Պայմանագրի դրույթները չեն կարող հակասել ՀՀ աշխատանքային օրենսդրության պահանջներին, բացառությամբ օրենքով նախատեսված դեպքերի:

45. Մարզադպրոցի տնօրենը օրենքով, հիմնադրի և լիազորված պետական մարմնի որոշումներով ու կարգադրություններով սույն կանոնադրությամբ իրեն վերապահված լիազորությունների սահմաններում ղեկավարում է մարզադպրոցի գործունեությունը և կրում է պատասխանատվություն՝ օրենքների, իրավական այլ ակտերի, հիմնադրի կամ նրա կողմից լիազորված պետական մարմնի որոշումների ու կարգադրությունների սույն կանոնադրության և կնքված պայմանագրերի պահանջները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար:

46. Մարզադպրոցի տնօրենը չի կարող զբաղեցնել այլ պաշտոն կամ կատարել վճարովի այլ աշխատանք, բացի գիտական, մանկավարժական և ստեղծագործական աշխատանքներից:

47. Մարզադպրոցի տնօրենը լրիվ գույքային պատասխանատվություն է կրում իր մեղքով մարզադպրոցին և (կամ) պետությանը պատճառած վնասի համար: Նրա լիազորությունների դադարեցումը հիմք չէ պատճառած վնասը հատուցելու պարտականությունները չկատարելու համար:

48. Մարզադպրոցի տնօրենը պարտավոր է չկատարել հիմնադրի և լիազորված պետական մարմնի՝ ՀՀ օրենսդրությանը հակասող որոշումները, կարգադրությունները, հրամանները, հանձնարարականները և դրանց չկատարման համար չի կարող ենթարկվել պատասխանատվության:

49. Մարզադպրոցի տնօրենի բացակայության դեպքում մարզպետի կարգադրության համապատասխան, տնօրենի լիազորությունները իրականացնում է մարզադպրոցի այլ անձ:

50. Մարզադպրոցի տնօրենը՝

- առանց լիազորագրի հանդես է գալիս մարզադպրոցի անունից, ներկայացնում է նրա շահերը և կնքում է գործարքներ,
- ՀՀ օրենսդրությամբ, հիմնադրի և մարզպետի որոշումներով ու կարգադրություններով և սույն կանոնադրությամբ սահմանված կարգով տնօրինում է մարզադպրոցի գույքը, այդ թվում՝ ֆինանսական միջոցները
- տալիս է մարզադպրոցի անունից հանդես գալու լիազորագրեր, այդ թվում՝ վերալիազորման իրավունքով լիազորագրեր,
- աշխատանքի է նշանակվում և աշխատանքից ազատում մարզադպրոցի աշխատակիցներին, նրանց նկատմամբ կիրառում է խրախուսման միջոցներ և նշանակում կարգապահական տույժեր,
- ստանկերում բացում է հաշվարկային հաշիվներ
- սահմանում է մարզադպրոցի կառուցվածքն ու կառուցվածքային ստորաբաժանումների անվանությունները
- սահմանված կարգով լիազորված պետական մարմնին է ներկայացնում մարզադպրոցի տարեկան ծախսերի նախահաշիվը
- հաստատում է ձեռնարկատիրական գործունեության եկամուտների և ծախսերի նախահաշիվը
- օրենքով և սույն կանոնադրությամբ սահմանված կարգով իր լիազորությունների սահմաններում արձակում է հրամաններ, հրահանգներ, տալիս կատարման համար պարտադիր հանձնարարություններ և վերահսկում դրանց կատարումը
- կազմակերպում է մարզադպրոցին անժամկետ ու անհատույց օգտագործման իրավունքով տրամադրված շենքերի նախագծային, շինարարական, վերանորոգման և այլ աշխատանքներ,
- որոշում է կայացնում մարզադպրոցի տրանսպորտային միջոցների օգտագործման մասին,
- ստորագրում է ֆինանսական փաստաթղթեր

գ) իրականացնում է ֆինանսական և արտադրական գործունեությանը վերաբերվող այլ հանդիպումներ,
դ) հաստատում է մարզադպրոցի հաստիքացուցակը և ֆինանսական - արտադրական գործունեության ծրագիրը,
ե) լուծում է մարզադպրոցին սեփականության իրավունքով պատկանող գույքը ֆիզիկական անձանց վարձակալության հանձնելու հարցերը,
զ) որոշում է ընդունում մարզադպրոցի ֆինանսական միջոցների օգտագործման վերաբերյալ,
է) մարզվեստի հաստատությունն է ներկայացնում կազմակերպության կառուցվածքը, աշխատողների թիվը, հաստատում է մարզադպրոցի ընդհանուր և առանձին կառուցվածքային ստորաբաժանումների կանոնակարգերը, ներքին կարգապահական և այլ կանոններ,
ը) հաստատում է մարզադպրոցի գործունեության ներքին փաստաթղթերը,
թ) իրականացնում է ՀՀ օրենսդրությանը չհակասող այլ լիազորություններ:

51. Մարզադպրոցի աշխատողների իրավունքներն ու պարտականությունները սահմանվում է Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ, սույն կանոնադրությամբ, աշխատանքային պայմանագրով, մարզադպրոցի առանձին ստորաբաժանումների ու աշխատանքային ներքին կանոնակարգերով և այլ իրավական ակտերով:

52. Փոխտնօրենը (ուսմասվար)
ա) պատասխանատվություն է կրում ուսումնասպորտային գործընթացի կազմակերպման, ուսումնական փաստաթղթերի վարման ուսումնական խմբերի ճիշտ կոմպլեկտավորման, մարզիչ-մանկավարժների որակավորման բարձրացման համար,
բ) իրականացնում է վերահսկողություն ուսումնասպորտային գործընթացի անցկացման, մարզակողների կողմից ծրագրային նյութի յուրացման նկատմամբ:

53. Մարզադպրոցի լիազորված պետական մարմնի ղեկավարը, մարզադպրոցի տնօրենը, մարզադպրոցի անունից հանդես գալիս պետք է գործեն բարեխղճորեն և ողջամտորեն ի շահ մարզադպրոցի կողմից ներկայացվող պետական կազմակերպության:

V. ՄԱՐԶԱԴՊՐՈՑԻ ՍՈՎՈՐՈՂՆԵՐԸ

54. Մարզադպրոցի սովորողները կարող են լինել դպրոցահասակ երեխաները, որոնք ունեն մարզվելու տեղեկանք՝ սպորտով պարապելու թույլատվության վերաբերյալ:

55. Սովորողների փոխադրումը հաջորդ ուսումնական տարի իրագործվում է պահանջվող հարմարների հանձնման, մարզչական խորհրդի որոշմամբ, տնօրենի հրամանով:

56. Սպորտային վարպետության հետագա բարձրացման նպատակով ՕՀՈՒ, հավաքական թիմերի կենտրոններ, վարպետ թիմեր տեղափոխված մարզիկները հինգ տարի (տեղափոխման օրվանից) կարող են համարվել նախկին սպորտդպրոցի սան, իրավունք ունեն հանդես գալու նրանց սպորտդպրոցի անունից: Տեղափոխված մարզիկի փոխարեն խումբը կարող է համալրվել նրանի ցածր պատրաստականություն ունեցող մարզիկով:

57. Սպորտդպրոցի սաները իրավունք ունեն օգտվելու սպորտդպրոցի կառույցներից, գույքից՝ սահմանված կարգի ստանալ համապատասխան հանդերձանք:

VI. ՄԱՐԶԱԴՊՐՈՑԻ ՎԵՐԱԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ ԵՎ ԼՈՒԾԱՐՈՒՄԸ

58. Մարզադպրոցը կարող է վերակազմակերպվել հիմնադրի որոշմամբ, ՀՀ քաղաքացիական օրենսգրքով սահմանված կարգով:

59. Մարզադպրոցը դատական կարգով կարող է վերակազմակերպվել օրենքով սահմանված դեպքերում և կարգով:

60. Մարզադպրոցի լուծարմամբ նրա գործունեությունը դադարում է առանց իրավունքները և պարտականությունները իրավահաջորդության կարգով այլ անձանց անցնելու:

61. Մարզադպրոցը կարող է լուծարվել հիմնադրի որոշմամբ, Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքով սահմանված կարգով:
Մարզադպրոցը կարող է լուծարվել նաև սնանկության հետևանքով:

62. Մարզադպրոցը դատական կարգով կարող է լուծարվել միայն օրենքով սահմանված դեպքերում և կարգով:

63. Մարզադպրոցի լուծարման դեպքում մարզադպրոցի պարտատերերի պահանջները բավարարելուց հետո մնացած գույքը ուղղվում է պետական բյուջե:

Գեղարքունիքի մարզային մարզադպրոցի

տնօրեն՝ Լ. Ներսիսյան